

գիրը անծանօթ կը մնայ, վասնդի այս թիւը իւրաքանչիւր վիլայէթի տուած պաշտօնական տեղեկութիւններու վրայ միայն կրնայ հիմնուիլ :

Ամէն պարագայի տակ պէտք է ընդունիլ որ Ատանայի և շրջակայից մէջ բնակող օտարահպատակ գաղթականութեանց երեւելիները կրնան հաշուել աւելի պաշարիւնով, մանաւանդ օտար թղթակիցները՝ որոնք կրնային ամէն տեղեր ազատօրէն մուտք գործել իրենց հետախուզութեանց համար: Հետեւաբար, սպասելով որ ճիշտ թիւերը ստուգուին իւրաքանչիւր վիլայէթի մէջ, իմ կարծիքով, այժմուս զոհերու ամենէն հաւանական թիւն է օտարներու ցոյց տուածը՝ որ 20 հազարէն վար չէ :

Ինչ կը վերաբերի նիւթական կորուսաներուն, բաւական է ինձ ըսել որ Ատանայի նահանգը, կայսրութեան ամենէն բարգաւաճ և ամենէն հարուստներէն մին, այսօր միմիայն աւերակներու կոյտ մըն է՝ տիրաւակսի և լուին :

Զինի փաշայի համաձայն, Ատանա քաղաքին մէջ հրդեհուած և քանդուած շէնքերը, ըստ յանախութեան, կը ներկայացնեն ամբողջութեան մէկ հինգերորդը, և ըստ արժէքին՝ մէկ երրորդը :

Պատկանեալ վարչութեան տուիքերուն համաձայն, հրդեհուած կալուածներու համադումար արժէքը կը ներկայացնէ մօտաւորապէս 96,000 օսմ. ոսկի: Իմ կարծիքով, աջ կողմէն զէրոյի մը յաւելումովն իսկ այս դումարը սնրաւական պիտի ըլլար, վասն զի Սուրիացի երեւելի մը, Էլիաս Թիւրքմանի, տեսած է անէպցումը իր անշարժ կալուածներուն՝ 30,000 ոսկի արժէքով, դումար մը որ հիմնուած է վերոյիշեալ վարչութեան պաշտօնական թիւերուն վրայ: Պաղչէի մէջ ուր ամէն կարելի խնայողութիւններով ուղուած է շի-